


ների առաջն առնում և ստուգում անցագրերի
խսկութիւնը կամ կեղծիքը... Իբրեւ վերջին
խօսք յանգիմանցի անցագրական պաշտօ-
նեային և նրանից երեսու թեքեցի արհա-
մարհանքով... :

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԵԱՆՑ

Շարայարելի



ՄԻ ԶԱՅՆ ԿՈՂԿԱՍԻՅ

ԿՈՂԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳ. ԸՆԿԵՐ. ԳՐԱԴԱՐԱՆԸ

Ա Յ Ս զրադարանը, ամէն բանով ղա-
նագանւում է նախորդ նկարագրած երկու
զրադարաններից, միայն այն բացառութեամբ,
որ նախորդ զրադարանների տւած օգուտը
սակի բան շատ է։ Կարելի է հաստատապէս
ասել, որ միայն Էժմանգիմ գրադարանն է
տարածել թիֆլիսում ընթերցասիրութիւնը
ընդհանրապէս, խորովրդականը մասնաւորա-
պէս։ Բարեկ. ընկ. զրադարանը ունի մօտա-
ւորապէս 6000 օրինակ գիրք։ Ունի նաեւ
ընթերցարան, բայց ոչ այնքան մեծ։ Ստաց-
ւում է թիֆլիսում հրատարակւող բոլոր
թերթերը, Ռուսաստանից՝ մի քանի հան-
դէտներ, թերթեր, և արտասահմանից Բաշկ-
դէս և Հնդկա-ասորիայ։ Գրքեր կարելի է զրա-
դարանից տանել տուն* և կարգալ վճարե-
լով 40 կոպէկ ամսամբար, որ շատ թանկ է.
(ինչպէս տեղեկագրից երևում է, մօտաւո-
րապէս 50 բաժանորդ են ունեցել մի տարւոյ
ընթացքում.) սրանից կարելի է եզրակացնել,
որ գինը մատչելի չէ. հասարակ դասակար-
գի համար։

* Էժմանգիմ գրադարանը նոյնպէս է վարւում,
(միայն ամսավճարը աշակերտների համար 50
կ., իսկ բանւորների համար 30 կ.) իսկ ժո-
ղովրդականն — ոչ. գրքերը միայն կարելի է կա-
ռալ զրադարանում։

Ընթերցարանը ներս մտնելու համար, մաս-
նաւոր անձինք պիտի վճատեն 2 կոպէկ, իսկ
աշակերտները 1 կոպէկ։ Եւ այդ բոլորը ոչ
կարգ ունի և ոչ էլ կանոն։ Չեմ մտնում
զրադարանի մանրամասնութիւնների մէջ, այլ
առաջարկում եմ իրագործման ենթարկել
հետեւեալ հարցը։ Թէ մեծ, թէ փոքր աշա-
կերտ, ուսուցիչ կամ հոգաբարձու ի մի
խառն, մի սենեակումն են նստում, կարգա-
լու համար։ Սրա վերաբերեալ, պատկառելի
ընկերութիւնը պիտի ուշադրութիւն դարձնի
և բոլորը մի սահմանի, մի որոշեալ կարգի
դնէ. թէ որքան վատ հետեւանք ունի այդ
խառնխուռն նստելու ձեւը, աշակերտի, ու-
սուցչի կամ մեծ ու փոքրի մէջ, դա ցոյց
է տալիս իրաքանչիւր մարդու կամայակա-
նութիւնը, իր նախ վերաբերեալ, այն է՝ որ
նախ աշակերտը չի համարձակւիլ ուսուցչին
սպասել, մինչև որ նա մի որ և է թերթ կամ
հանդէս կարգալու վերջացնելով ձեռքից վերջ-
նի կամ խնդրի, և երկրորդ, նա այնքան աշ-
մաշկոտ կարող է գտնել, որ ստիպւած պի-
տի լինի կամայակամայ հեռանալ այդ տե-
ղից, իսկ ուսուցիչը, նկատողութեան է առ-
նում և զիտենալով որ անպատճառ միւս օրը
հանդիպելու է իր դասին, այն աշակերտին,
որին տեսել է զրադարանում, անարգում է
շատ ավելցիկից խօսքեր շոյալիւղով աշակեր-
տի հասցէին. տպացոյցը աւելորդ է։ Հաս-
կանալի է, որ ոչ միայն ուսուցչի և աշա-
կերտի մէջ է տեղի ունենում այդ, այլ և
մասնաւոր անձանց մէջ՝ տեսնելով իրանց
կողքին մի երեխային նստած. ուրեմն պարզ
է, որ մի ուրիշ բաժանմունքի եւս կարիք է
զպացում։ Այս առաջարկութիւնը ընկերու-
թեան կարող է մի փոքր նեղ դրութեան մէջ
ձգել, որովհետեւ այդ բաժանմունքը պահան-
ջում է զրամական ոչ մեծ ծախք, (սակայն
այսպիսի ծախքեր կարող է գործադրել և ուրիշ
նպատակի համար), օրինակ՝ նախ և առաջ
պիտի առանձին սենեակ վարձել, երկրորդ,
եթէ զրադարանը այժմ տառնում է իւրաքան-
չիւր թերթից մի օրինակ, այն ինչ այդ ժա-
մանակ կը պահանջի կրկնապատիկը։

Ընկերութեան, այս հարցի իրականացման
համար, կարող ենք յայտնել միայն մեր կար-

ծիրը, այն է՝ որ յատուկ, միայն աշակերտ-ներէ համար, մի որոշեալ ժամանակամիջոց նշանակել՝ (օրինակ ճաշից յետոյ) մի քանի ժամ առանձին պարսպեղէն համար, նոյն դահլիճում, ոոր հասակաւորները լինելիս կը լինին: Գէթ այսպիսով ընկերութիւնը կարող է, ոչ միայն ազատել շատ անախոր-ժութիւնից մարդկանց, այլ և օգուտ քաղել նրանից, որ շատ աշակերտներ չեն մատա-հանում յաճախել ընթերցարան՝ նախօրօք չալի առջ ունենալով, որ կարող է ուսու-ցիչ կամ հոգաբարձու պատահել իրան այդ տեղը:

ՀԱՅՐ. ԲԱՐԱՌԻՐԱՆՍ



ԳԵՂԵՑԿԱԳԻՏՈՒԹԻՒՆ



(Շար. տես յէջ 197)

ՊՐԱԿ Բ

ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԳԵՂԵՑԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա

Գեղեցկիմ ժողովրդական սահմանը. — Գեղեց-կագիտութիւնը Ռոգերսոնութեամբ միւթ մը մկատուե-լու է — Գեղեցկագիտական մայիցից զամազամ աղբիւրները — Գեղեցկիմ տեսակները զգալիաց թելադրամքը. Գապիտոնեմ Աստղիկը և արդի ժարտարի մը գործը — Գեղեցկիմ ու տգեղիմ, հա-ճոյից և ցաւոց խառնուրդէմ յառաջ եկած զգա-ցումը — զամազամ տեսակը գեղեցկիմ:

Ա. — Եթէ փոխանակ գեղեցկին իմա-տաւորական սահմանը փնտռելու՝ ընդունինք անոր ժողովրդական սահմանը և բաւականա-նաճը ըսելով թէ ագեղեցկի է ինչ որ հա-ճոյ է, խնդիրը կը մնայ հաճոյք բառը լաւ լուսարանելու՝ և առանձնասիրելու անոր խորին

ենթակայութիւնն ու զաղտիկ այլ անխղիք առնչականութիւնները գեղեցկից գառող ան-հատին նկարագրին (caractère) հետ:

Արդ, նկարագիրը ոչ այլ ինչ է, բայց եթէ բոլոր մեր նախնեացմէ ժառանգած և անհատօրէն ստացած կրկնակի փորձառու-թեանց յառաջածաղը (résultante), Այս ներ-քին և բեղմնաւոր դրամագիտուն վրայ զգա-լեաց զանազան գործարաններուն հետ մեր ըղեղային յարաբերութեանց մէն մի վայր-կեանք՝ անընդհատ մեծ կամ փոքր աճում մը կամ նւազում մը կը բերէ, ըստ որում իւրաքանչիւր նոր գրգիւ կանխազդայի գումա-րին համեմատութեամբ դրական է կամ բա-ցասական: Առաջին պարագային մէջ մեր նկարագրին վրայ յաւելած մը կ'ըլլայ, յի-շողութեան մէջ կ'արձանագրուի աշխի նշա-նով՝ և հաճոյք կը կոչուի. երկրորդ պարա-գային մէջ մեր հոգեբանական դրամագիտին զեղչ մըն է, նուազ նշանը կ'առնու և ցաւ կը կոչուի: Միայն նկարագիրը կա-մուած է զգայարանական և մտաւորական, այսինքն զգացողական, իմացողական և գա-ղափարային յիշողութիւններէ և հետեւաբար հետզհետէ աւելի բարձր հաճոյք կամ ցաւ կ'իմանանք՝ այդ ոգեկան տեսակաց իւրաքան-չիւրէն:

Գլխաւորաբար զգայարանական հաճոյքն ու ցաւը «գեղեցկի կամ տգեղ», կ'անուանենք, զլիաւորապէս իմացական հաճոյքն ու ցաւը «ճշմարիտ կամ սուտ», զլիաւորապէս գա-ղափարային հաճոյքն ու ցաւը «սուր կամ անսուր»:

Ըստ այսմ՝ գեղեցկին այն է որ մեզ հա-ճոյ է, բայց մասնաւոր զգայարանօք և հետ-զհետէ անկէ բարձրանալով՝ զգացմամբ, ի-մացականութեամբ և խեղալով:

Բ. — Արդ եթէ գեղեցկիւր ոչ այնչափ առարկայից որչափ մեր զայն նկատելու տրա-մագրութեան մէջ է, այսինքն, եթէ գեղե-ցկիւր առարկայական կերպով քննելով անհնար եղաւ մեզ հաստատել բացարձակ օրէնք մը որ ամէն գեղեցկի առարկային կարենայ պատ-կանիլ, հարկ կ'ըլլայ՝ ինչպէս ըսինք՝ գե-ղեցկագիտութիւնն իբր հոգեբանութեան ճիւղ մը միայն նկատել և ըստ այնմ, ուսումնա-